մինչև մեռեալս ևս յարուցանէ և կենդանի առնէ, թէպէտ ոչ որպէս զօրութեամբ արարչին Տեառն Աստուծոյ, այլ իբրև Օրինօք և սահմանաւ արարեալ 'ի ձեռանէ բանական հոգւոյ մերմէ, նայերուք արհեստն ժամացուցի որում 'ի հրահայելեաց է յօրինելով զանազան կերպարանօք անդամս նորայ և ըստ Օրինօք կազմելով տայ նմայ կենդանութիւն շարժման և ցուցանելոյ մեզ հաւաստի ժամ 'ի տիւ և 'ի գիշեր, նաև Օրինօք համարելով ջրաղացս տալով նմայ չափաւոր կերակուր ջրոյ նայ կենդանանայ շարժմամբ և ծառայէ մեզ աշխատութեամբ որում մխիթարիմք 'ի ծառայութենէ նորայ և ընանիցիմք հացիւ, նա և հաստատաւ որսամբ ձկունս 'ի սրընթաղնացութենէ իւրեանց 'ի խոր ծովէ դուրս հանելով նոցայ որում 'ի նախնում և 'ի առաջնում 'ի միջի մեր իբր անհնարին էր, և սահմանաւ իջուցանեմք թռչունս 'ի բարձրութենէ յօդոյ և կալանաւոր առնեմք նոցայ յորոգայթիւ որ այժմոյս մեզ եղև դիւրին որ առաջնում անհնարին, և սահմանաւ մուծանեմք առիւծն մէջ յորոգայթի որում յօրինող յորոգայթին ոչ կարէ կալ առաջի կալանաւոր առիւծոյն իւրոյ բոպէ մի, բայց սահմանաւ տիրեսցէ հպարտութեան նորայ, և արդ՝ հաստատեմ 'ի միտս ընթերցողիդ բնական իրաւամբ այլ իմն բան կասկածանաց որ՝ եթէ անասուն նբութիւնք 'ի ներքոյ արեգական